

«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀԱՅԱՍՏԱՆ» ՊՈԱԿԻ

ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝

ԱՐԱ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝

ՀՄԿ ՀԱՅԱՍՏԱՆ ԳՐԱՄԵՆՅԱԿԻ ՏՆՕՐԵՆ՝

ԱԼԵԶՍ ՈՍՄԻՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝

«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀԱՅԱՍՏԱՆ» ԾՐԱԳՐԻ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉ,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ՝

ՆԵՐՍԵՍ ԵՐԻՑՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հովսեփյան,

Սույնով ցանկանում եմք Ձեզ տեղեկացնել ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհրդի (ՇԽ) և Կառավարման խորհրդի (ԿԽ) Ընտրական հանձնաժողովի նախագահի և Ընտրական հանձնաժողովի քարտուղարի մտահոգությունը՝ նույն ընտրությունների Ընտրական հանձնաժողովի որոշ անդամների կողմից դրսևորած ոչ պատշաճ վարքի և գործելակերպի վերաբերյալ, որը, մեր կարծիքով ակնհայտորեն նպատակ է հետապնդում խոչընդոտել ընտրական գործընթացը և տապալել ընտրությունները:

Մասնավորապես՝

1. Ընտրական հանձնաժողովի 19.05.2010թ. կայացած նիստի ժամանակ բոլոր անդամների կողմից միաձայն որոշվեց ընտրությունների նախորդ օրը՝ մայիսի 21-ին, ներկայանալ ՀՄՀ Հայաստան գրասենյակ, և ՀՄՀ Հայաստան ծրագրի ՇԽ և ԿԽ անդամների ընտրությունների կարգի 3.3.6 կետի համաձայն, որում հստակորեն սահմանված է, որ «Քվեաթերթիկների հակառակ կողմում քվեարկության նախորդ օրը ստորագրում են ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները», ստորագել բոլոր քվեաթերթիկները: Սակայն, անկախ կայացրած որոշումից, քվեաթերթիկները չեն ստորագրվել ընտրական հանձնաժողովի անդամներ Լ. Քամայանի, Վ. Ասրյանի, Տ. Ավագյանի և Ա. Բալաբեկյանի կողմից:
2. Ընտրական հանձնաժողովի անդամ Ամայա Բալաբեկյանը քվեարկության վայր ներկայանալով նախատեսված ժամից 40 րոպե ուշացումով, այսինքն՝ 09:40-ին, գրեթե մեկ ժամ անց լքեց քվեարկության վայրը՝ տեղեկացնելով Ընտրական հանձնաժողովի անդամներից մի քանիսին /Լ. Քամայանին, Վ. Ասրյանին, Տ. Ավագյանին/, որ ինքը մեկնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն և այսօր այլևս չի վերադառնա: Այնուհետև հայտնի դարձավ, որ Ա. Բալաբեկյանը լիազորագիր է տրամադրել Լ. Քամայանին, սակայն վերոնշյալ «լիազորագիրը» չի տրամադրվել ո՛չ Ընտրական հանձնաժողովի նախագահին և ո՛չ էլ Ընտրական հանձնաժողովի քարտուղարին, ուստի մենք ծանոթ չենք այդ «փաստաթղթի» բովանդակությանը:

3. Լ. Քանայանը, Վ. Ասրյանը, Տ. Ավագյանը և Ա. Բալաբեկյանն առավոտյան քվեարկության վայրում հայտարարեցին, որ իրենք չեն պատրաստվում մասնակցել Ընտրական հանձնաժողովի աշխատանքներին, մի կողմում կնստեն և կհետևեն Ընտրական հանձնաժողովի մյուս անդամների կողմից ընտրությունների անցկացմանն ուղղված աշխատանքներին:
4. Այնուհետև, ընտրական հանձնաժողովի անդամներ Վ. Ասրյանը բարձրաձայն հայտարարեց, որ իրենք մասնակցելու են միայն քվեափերթիկների ամփոփմանը և հեռանալու են, որովհետև չեն ընդունում ընտրությունների արդյունքները: Դա ասվեց այն դեպքում, երբ ընտրությունները դեռևս չեն ավարտվել:

Ուստի, հիմք ընդունելով վերոգրյալը՝ Ձեզ՝ որպես «ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀԱՅԱՍՏԱՆ» ՊՈԱԿ-ի Գլխավոր գործադիր տնօրենի, անհրաժեշտ ենք համարում տեղեկացնել Ընտրական գործընթացում տիրող իրավիճակի մասին:

Բացի այդ նշենք, որ Ընտրական հանձնաժողովի անդամները, հանձնաժողովի կազմում ընգրկվել են կամավորության սկզբունքով և քաջ գիտակցել են իրենց ստանձնած պարտավորությունների և դրանց իրավական հետևանքների մասին, և հիմա անհասկանալի է, նրանց կողմից դրսևորած վարքագծի տրամաբանությունը:

Հարգանքներով՝

Ընտրական հանձնաժողովի նախագահ՝



Ա. Սարիբեկյան

Ընտրական հանձնաժողովի քարտուղար՝



Մ. Եղիազարյան